№ 92 Երեքշաբթի Օգոստոսի 18 — 1887 — Երեքշաբթի Օգոստոսի 18 № 92

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ գիւղացիները. Նամակ Աղստաֆայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարիան և Բերլինի դաշնագիրը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շատերից մէկը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ

Ցայսմիկ է թէ որքան ծանր վիճակի մէջ են գտնվում Անդրկովկասի մեր հայ գիւղացիք, հողի սակաւութեան պատճառով։ Դրանից առաջանում են անվերջանալի վէճեր, յանցանքներ և սպանութիւններ։ Մտէք ամեն օր դատարան և դուք մի կամ երկու գործ կը լսէք, որոնց սկզբնապատճառը հողային հարցն է։ Հողի սակաւութեան պատճառով շահասէր անձինք աշխատում են յափշտակել իրանց հարևանների հողը, արածացնում են օտարների արտերում իրանց անասունները. հողի սակաւութիւնը անբարոյականացնող ազդեցութիւն գործելով չինականի վրա, ստիպում է նրան դիմել զանազան անվայել արարքների, ապօրինի ձեռնարկութիւնների։ Մի խօսքով, որքան որ գիւղական կեանքի անկանոն երևոյթների պատճառը գիւղացիների բարքերի մէջ մտած ապականութեանը պէտք է վերագրել, այնու ամենայնիւ, անհերքելի է որ հողային եղեռնագործութիւնների մեծ մասը վերագրելու է հողի պակասութեանը։ Բայց և այնպէս, երևի մեր գիւղացիների մէջ այնքան զգալի է ընկերական ոգու բացակայութիւնը, որ նոքա առանց միմեանց ձեռնասելու չեն կարող ապրել։ Կարսի նահանգում աղգաբնակութեան սակաւութեան պատճառով, բնակիչները օգտվում են հողի խոշոր քանակութեամբ. հողի պակասութիւնը նոցա համար դեռ ևս անհասկանալի է։ Ընդարձակ արօտատեղեր, ցանելահողեր այլ ևս չեն թողնում աւելին ցանկալու։ Անցեալները առաջին անգամ ինձ պատահեցաւ լինել Կարսի շրջանի մի երկու գիւղում և այդտեղ լսեցի, որ ուրիշների արտերում արածացնելը այստեղ ևս գործադրվում է։ Քանդելու, կործանելու, ոչնչացնելու ձգտումը այնքան մեծ է առհասարակ մեր ժողովրդի մէջ, որ ոչ դալար բոյսերի, ոչ նորաբողբոջ ծառերի դեղեցիկ տեսքը չէ կարող խղճի խայթ յարուցանել էստետիական ճաշակից զուրկ անձանց մէջ։ Վնասելու այդպիսի ինքնատեսակ ձևի դէմ՝ վնասվողը պատասխանում է ինքնատեսակ վրէժխնդրութեամբ։ Հրէշաւորում, այլանդակում է արածող կենդանիներին, կոտրում է մինի եղջիւրը, կտրում է միսի ականջը, երրորդի ագին.... անբան անասունները տուժում են իրանց բանական տէրերի վարմունքի համար։ Առ այժմ պէտք է յիշեմ և մի ուրիշ երևոյթ գիւղացու աշխարհայեցողութիւնից։ Թէ գիւղացու և թէ քաղաքացու ականջին այնքան են հնչել «հայք ոչ միաբանին» խօսքերը, որ մեր հասարակ ժողովուրդը համոզված է թէ մեր ազգի վրա ծանրանում է նախախնամութեան անէծքը, նա կարծում է, որ նախնեաց անմիաբան ոգին ընակվելով մեր մէջ, ստիպում է մեզ հեռու լինել միաբանական գործակատարութիւններից, այնպէս որ դուրս է գալիս, թէ մենք ընկերական ոգով չը վարվելու համար մեղաւոր չենք, որ դա մի բնական կարգ է, որին մենք չենք կարող օգնել... Այդ մի և նոյն միտքը բացվեց այն գիւղում, որտեղ մենք գնացել էինք պաշտօնական գործով։ Օտարականի, մի քաղաքացու գիւղ գալը հեռաքրքրում է գիւղացուն և ահա մի քանի բոպէից յետոյ ձեր շուրջը խմբվում են բաւական թիւով գիւղացիներ։ Խօսակցութեան անմիջական մասնակցողները սակաւ են լինում, իսկ մնացեալ բազմութիւնը ականջները լարած, անյագ հետաքրքրութեամբ լսում է նորերի խօսքերը։ Գիւղի մեծատուն և հասկացող ճանաչվածներից մինը սկսեց դանդատվել հայի անմիաբանական ոգու մասին. նա թվում էր այնքան յուսահատուր, այնքան ճնշված, որ նրա խօսքերը, ճշմարիտ ասած, սարսափ ազդեցին մեր մէջ։ Խօսակցիս կարծիքով մի քանի տարուց յետոյ հայերիս դոյութիւնը կանցնի պատմութեան շրջանի մէջ. նա պատմում էր մի քանի դէպքեր, թէ ինչպէս այս կամ այն ուսումնական անձը, ըստ նրա տեղեկութեան, թողնելով մայրենի կրօնը՝ դիմել էր այս կամ այն եկեղեցու դիրքը. նրա կարծիքով, ուսումնականները հեռանում են իրանց եկեղեցուց, իսկ հասարակ ժողովուրդը տգէտ լինելով, ոչինչ չէ կարող անել։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս խօսակցութիւնը ապացուցանում է խօսակցիս տգիտութիւնը մեր ազգային գործերի դրութեան մասին։ Նա ուրախութեամբ պէտք է խոստովանվեմ, որ այդպիսի յուսահատ տրամադրութիւն չէ նկատվում Անդրկովկասի միւս նահանգների հայ գիւղացիների մէջ, ուստի և այդ երևոյթը վերագրում եմ տաճկաց ստրկացնող դարևոր տիրապետութեան ազդեցութեանը։ Նա սկսեցի համոզել խօսակցիս, որ ոչ մի ճշմարիտ ուսումնական չէ փոխել իր կրօնը, որ նրա ճանաչած և մատնացոյց արած ուսումնականները իմաստակներ են եղել, աշխատեցի բացատրել, որ, դոհութիւն Աստուծոյ, մեր մէջ կան բազմաթիւ անձինք, որոնք առանց իրանց օգուտը մտածելու, դիշեր և ցերեկ, անդուլ, անդադար տքնում են ընդհանրութեան օգտի համար. խօսեցի և այն մասին, որ արդարև, մեր ազգը կարող է ոչնչանալ միայն այն դէպքում, եթէ մենք միաբան չենք լինի, եթէ մենք կոչնչացնենք մեր դրացու արտը, հոյ ճարակ կը դարձնենք նրա միամեայ քրտնաթոր աշխատանքի արդիւնքը, խոտի դէզը և այլն և այլն։ Որքան և գիւղացիները ուշադրութեամբ լսում էին իմ խօսքերին, այնու ամենայնիւ, հաստատապէս գիտեմ, որ դա մի որոշ տպաւորութիւն չէր կարող թողնել նոցա վրա։ Ի ծնդենէ, հարիւր տարիների ընթացքում գիւղացու մէջ արմատացած մի միտք չէ կարելի միանդամից փոխել, ոչնչացնել. հարկաւոր է յարատև, անխոնջ աշխատանք այդ որոմները նոցա սրտից արմատախիլ անելու համար։ Ես առոչինչ կը համարէի որ և է անձնուրոյթեան սխալ դաղափարը մի հարցի մասին, եթէ որ չը համոզվէի նրա ունեցած դիրքին հասարակութեան մէջ։ Ինչ և լինէր, բայց մեր յիշած գիւղի հասարակութիւնը այնպէս էր համոզված, որ իմ խօսակիցը մի գիտնական անձնուրոյթիւն է. «ծով է, ծով է»—ասում էին նոքա.... և եթէ ծովը այդպէս է՝ երևակայեցէք միւսների դրութիւնը։ Սակայն ես այդ խօսակցութեան մէջ տեսայ և մի ուրիշ երևոյթ—գիւղացու անօգնականութիւնը, նրա հետաքրքրութեան, նրա հարցասիրութեան բաւականացնողի, նրա գլխում կուտակված մտքերի լուծող անձի բացակայութիւնը։ Մեղաւոր է արդեօք գիւղացին... նա վարում է մի տեսակ առանձնացած, կղզիացած կեանք. աշխարհիս մէջ անցնող եղելութիւնները չեն հասնում նրա ականջին. անծանօթ՝ հեռաւորի հետ, նա տեսնում է լոկ իրան չրջապատող անգոյն իրականութիւնը, որը իր անբովանդակ տեսքով հրապուրիչ չէ կարող լինել նրա համար։ Մարդուն յատուկ ձգտումը գործելու, զբաղվելու, ծագեցնում է գիւղացու մէջ զանազան հարցեր, բայց չը կայ նրանց լուծող։ Եւ ահա դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ, մանաւանդ ձմեռը՝ կրթիչ, հրահանգիչ, թարմ խօսակցութեան բացակայութեան պատճառով, գիւղացին լսում է երևակայութիւնը միայն սնուցանող հրէշաւոր հեքիաթներ, առասպելներ. քաջերի, դևերի, վիշապների մասին պատմված զրոյցներով խանգարված գիւղացու երևակայութիւնը նրա աչքերին առաջքներ է երևացրել և խօսակցութեան միջոցին իւրաքանչիւրը պատրաստ է ունենում առատ պաչար իր կամ իր հարևանի, ազգականի տեսած սատանայի, քաջքի մասին։ Եթէ մէկը տանջվում է լուսնոտութեան ախտով և նրան գիշերով տեսել են փողոցում կամ մի այլ տեղ—ահա սարքվում է երկար ու բարակ յաւելուածներով շաղկապված մի պատմութիւն, որ այս ինչ մարդուն սատանաները տարել են, ուզեցել են նրան ժայռից գլորել և այլն՝ մի ուրիշի երեսը գիշերով պատմամբ լիզել է կովը, այծը—և ահա հետևեալ օր նա այնպիսի սարսափելի պատմութիւն է հրնարում այցելու-սատանայի մասին, որ լսողի մազերը փշաքաղվում են։ Մէկը պատմում է մի ուրուականի մասին, որ լակոտի կերպարանքով հետևել է մէկին և առաւօտը յայտնվել է որ մի դիակ էր դա, թէ նրան թաղել են, բայց հետևեալ և միւս գիշերները նա դարձեալ երևացել է նոյն տանը, մինչև որ այս ինչ մօլլայի, դերվիշի խորհրդով կտրել են բահով դրա գլուխը և «փառք ի բարձունս» ասելով թաղել, որից յետոյ և անդրդերեզմանեան բնակիչը դադարեցրել է իր այցելութիւնները։ Մեր ժողովուրդը հաւատացած է թէ թուրք մեռեալները ուրուականներ էին դառնում և թէ այժմ նոցա մէջ ևս վերացել է այդ երևոյթը, որովհետև նրանք մեզանից թարգմանել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՏԵՐԻՑ ՄԷԿԸ

Ա.

ՍԵՒԻՑ Վ.ԵՐ Է.Լ. ԻՆՉ ՍՊԻՏԱԿ

Համբարձումը և իր կին Նազլուն նստած են իրանց տանը։ Երեկոյ է. փոքրիկ ձիթաճրագը դրած է նրանց ետևում, տախտակից շինած մի տեսակ տախտի ծայրին, որի վրա հաց են դընում, և այդտեղից լուսաւորում է երկու ամուսինների դէմքերը։ Երկուսն էլ լուռ են, նայում են դէպի առջև, ինչպէս նկատելի է, մտածութեան մէջ են։ Նազլուի քիթիկալը թուլացած, ընկած է, արխալուխի թիքերի ծայրերը յետադարձ են դէպի ուսերը. երևում է որ նոր է պրծել աշխատանքից։ Համբարձումի կոշտ դեղնագոյն չուխան կրոտ ու ցեխոտ է։

Ձմեռվայ սկիզբն է, երբ ամեն ինչ չորացած վերջացած է, երբ Շուշիի արեգակը մի երկարատև հրաժարական է տալիս աշխարհին։ Ցուրտ ու մութ դարձեալ օրերը անընդհատ յաջորդում են միմանց, կրակի բոցը օրից օր քաղցր և հրապուրիչ է դառնում։ Կեանքը մտնում է չորս պատերի մէջ այնտեղ փակվելու համար. հաստ մուշտակները, տաք չորերը սրբվում, պատրաստվում են։ Ձմեռը գալիս է։

Համբարձումը անընդհատ չփում է իր ձեռքերը՝ տաքացնելու մտքով Նազլուն ծածկել է ծնկները մի հաստ չորի տակ։ Համբարձումը մերթ մերթ աչքը անց է կացնում իր չորս կողմը և այդ ժամանակ նրա դէմքը, աչքերը, նրա ամբողջ մարմինը կարծես բարձր ասում են այն, ինչ խօսում է սիրտը իրան համար։ «Ձմեռը եկաւ, բայց մենք ոչինչ չունենք», այսպէս է խօսում սիրտը։

Ոչինչ չը կայ։ Ածուխի տեղը, տան ներքին անկիւնը, բոլորովին դատարկ է. միայն սև փոշին վկայում է, որ մի ժամանակ այդտեղ եղել է ածուխ։ Հացի տախտը նոյնպէս դատարկ է. հացի չորը,—այդ լաւ գիտեն սանտէրները—հաց չէ ծածկում այժմ, և ոչ մի փշրանք։ Մինչև իսկ փոքրիկ ճրագին ձէթ մատակարարող չիչը կողքի վրա ընկած է ճրագի մօտ։

Գետնի վրա ոչինչ չը դանելով, Համբարձումը նայում է առաստաղին։ Հին, սևացած գերանները տանիքի ծերութիւնից կուչ եկած տախտակներին մէջքը տուած նայում են իրանց սիրոջը այնպէս, ինչպէս նայել են երեսուն տարի շարունակ. անփոփոխ դէմք, որ զարդարված է հինաւուրց սարդի ոստայնների թելերով տարիների թողը, նըստելով այդ թելերի վրա, կազմել է սպիտակ շարանոցների շարքեր, ինչպէս մանր ձիւնը ծառից կախ ընկած թելի վրա։ Առաստաղի այդ զարդարանքը յիշեցնում է մի հին ջրաղաց, որի տէրերը վաղուց մուսակել են թէ ինչ բան է ալիքը։

Դռնովը մտաւ մի աղջիկ, որ կօշիկները հանեց, անցաւ վերև, կանգնեց ճրագի մօտ, անշարժացաւ։ Երկու ամուսինները, չը փոխելով իրանց դիրքը, աչքի տակով նայեցին նրան, այնպէս որ կարող էին միայն նրա ձեռքերը տեսնել։ Լռութիւնը շարունակվեց։

Ճրագը յանկարծ պլպլաց, բոցը փոքրացաւ, դառաւ մի փոքրիկ փայլուն կէտ։ Նրա մօտ կանգնած աղջիկը ուշադրութիւն չը դարձրեց. մի ձեռքը դրել էր ծնօտի տակին, իսկ միւսը կրծքի վրա, իբրև յենակէտ այդ ձեռքին։ Ցունը խաւարի մէջ էր ընկղմում։

—Չեն տեսնում, կուրացել ես, գոչեց Նազլուն զայրացած,—պատրուքը ընկաւ ձէթի մէջը, բարձրացրու։

Աղջիկը սկսեց բարձրացնել ասղի ծայրով։

—Այ կոյր պահեմ քեզ միչտ, կոյր, կոյր մընաս.... ասում էր մայրը, մինչդեռ աղջիկը այդ հրամանն էր կատարում։

Իսկ Համբարձումը կարծես չէր լսում, չէր տեսնում։ Ամեն ինչ իրաւացի էր գտնում. ճրագն էլ այդպէս պէտք է անէր, իր կինն էլ իրանը պիտի ցոյց տար, իսկ աղջիկը իրանը։

Երբ ճրագը դարձեալ լոյս տուեց, Նազլուն հարցրեց աղջկանից.

—Չը բերար։

Նա գլխով բացասական պատասխան տրաւ։

—Ինչու։

Նա ուսերը վեր քաշեց, ասում էր «ինչ իմանամ»։

—Հիմա էլ մունջ կարեցիր. ասա է, ձայն չունես, կորված լեղուդ ուր է։

—Ես ներս չը մտայ, խօսեց վերջապէս աղջիկը գլուխը կուացնելով։

—Չը մտար... Ցեանում ես ինչ օրին է բերում գլուխս...

Եւ Նազլուն նայեց պատին, կարծես նրան էր հարցնում։

—Ցօ ջուր կտրած, այսքան ժամանակ էլ ուր էիր։

—Պատի տակ կանգնած էի. հայրն ու եղբայրը տուն եկան, ամաչեցի, ներս չը մտայ։

—Դուռը ծեծէիր, դուրս կը գար։

—Գուցէ նա չը դուրս գար։

—Կասէիր Նատօին եմ ուզում։

Աղջիկը ոչինչ չը պատասխանեց։

—Դէ գնա, հիմա դուրս կանչիր. ասա մայրս ասում է մի հաց տուէք փոխ. ինչ մեծ բան է, հարևանը հարևանի մօտ փոխի չի գնայ։ Շուտ արա, գնա։

Վերջին խօսքերի ժամանակ մօր ձայնը աւելի կակուղ էր, խրախուսական։ Բայց աղջիկը մնաց կանգնած, մինչև իսկ լաց եղաւ։

—Քեզ չեմ ասում, գնա այս բոպէին։

—Մեռնեմ էլ չեմ կարող, պատասխանեց աղջիկը աչքերը սրբելով։

—Բաս քաղցած սատկելու, կոտրվելու էք։

Եւ Նազլուն էլի սկսեց խրախուսել, սիրտ տալ. ինչ կայ, ընկերի տուն է, ամեն օր գնում ես, գնա այժմ էլ ասիր։ Բայց օրիորդը անդրդուելի էր, պատճառաբանելով թէ հիմա ամենքը քնած կը լինեն, ինչ կասեն հայրն ու եղբայրը։ Բացի այդ ամենից անձրևը սկսել էր դալ, իսկ Նատօի տունը այնքան էլ մօտիկ չէ. ինքը մենակ, այդ մութ ժամանակը ինչպէս գնար։

Նազլուն կրկին չարացաւ, սկսեց անէծքները, հրամայեց աղջկան որ իր հետ գնայ։

—Այ կնիկ, բաւական է, գլուխս ցաւեց, ընդհատեց Համբարձումը.—չը կայ, մենք էլ չենք ուտի, ինչ կայ որ...

են «Փառք ի բարձունս» և ասում են հնչեցեալի վրա։ Մէկ ուրիշը պատմում է թէ ինչպէս բռնել էր մի սատանայի, որի մազը գրել էր Նարեկի մէջ, թէ սատանան չէր կարող հեռանալ այդ անից առանց իր մազը ստանալու և թէ մի օր սատանան յաջողում է համոզել տան տղային և ստանում է նրանից իր մազը ու անյայտանում, բայց նախ քան այդ՝ անիծում է, որ այդ տանը անծակ աման չը գտնվէր։ Եւ այդ օրից սկսած այդ տան նոյն իսկ նոր առնված ամանները յայտնվում էին ծակած.... Այս և սրա նման հարիւրաւոր առասպել տալիս են առատ նիւթ նախապաշարմունքի համար։ Եւ չը կայ մէկը, որ գտնէ կասկած յարուցանէ գիւղացու մէջ՝ պատմվածի հնարաւորութեան մասին։ Ընդհակառակն, բոլորը քաջալերում են պատմողին, վկայում են, որ նոյնանման դէպքեր պատահել են և Կիրակոս քէհյայի հետ, և Գասպար խնամու, և Մարտիրոս սանահօր հետ.... Նոյն իսկ առօրեայ հարցերի մասին գիւղացին այսպէս է տեղեկանում։ Նա տանում է քաղաք իր ալիւրը, իւղը, պանիրը ծախելու և կարծելով, պարզմտօրէն, թէ իւրաքանչիւր քաղաքացի անշուշտ տեղեկութիւն ունի լրագրից, իր ապրանքը գնողից հարցնում է թէ ինչ կայ գրված լրագիրներում։ Քաղաքացին ևս առանց երկար ու ձիգ մտածելու պատմում է որ և է սրճատնում խօսած մի տեղեկութիւն և ահա գիւղացին վերադառնալով գիւղ, արևելցուն յատուկ չափազանցութեամբ և յաւելումներով հաղորդում է այդ լուրը իր համագիւղացիներին։ Այնուհետև որ և է գործից անտեղեակ քաղաքացու՝ չը մտածած կերպով հաղորդած լուրը՝ զուտ դրամի տեղ ընդունվելով, կը տարածվի բերանից բերան և գիւղից գիւղ։ Պատահում է յաճախ որ քաղաքում լսած որ և է լուր՝ գիւղացու չը հասկանալու պատճառով այնպէս այլանդակվում է, որ նրա սկզբնական նիւթը դժուար է լինում ճանաչել այդ աղաւաղման մէջ։ Արեգակի խաւարումից առաջ թէ գիւղացիների և թէ քաղաքի պառաւների մէջ սարսափ էր տիրում, թէ՝ արեգակը պէտք է խաւարի։ Գիւղացիներին հրահանգված էր այդ օրը դուրս չը թողնել անասուններին, որովհետև նկատված է, որ արևի խաւարման միջոցին սարսափը դոցա պաշարում է և նոքա կարող են կոտորվել։ Սկզբից արդէն ոչքան անհեթեթ առասպելներ են կցել արևի խաւարման հետ։ Եփրեմ-վերդիի աւանդապահներից մինը յայտնել էր գիւղացիներին, թէ արևի խաւարումը վեց օր պէտք է տևէ. մի ուրիշը զուշակել էր թէ խաւարման հետ պէտք է լինի և երկրաշարժ, մի երրորդը՝ թէ դա մօտալուտ պատերազմի, վարակիչ ախտի նախազգուշացումն է, թէ մեր մեղքի համար աղդարարութիւն է վերևից և այլն։ Եւ ահա գիւղացին սարսափահար, սրատրոփ սպասում էր օգոստոսի 7-ին։ Նախապաշարմունքի մաղթեղջիւրը բացված էր և մոտիապաշտները ամբողջ բեռներով դուրս էին բերում հրապարակ։ Եւ, ըստ մեծի մասին, չը կայ գիւղերում մէկը, որ բացատրէր ժողովրդին արևի խաւարման պատճառը և ազատէր ժողովրդին տիրող սարսափից։

Խ. Մառանկոզեան

ՆԱՄԱԿ ԱՂՍՏԱՖԱՑԻՑ

Օգոստոսի 11-ին

Վերջին հեղեղը Անդրկովկասեան երկաթուղու համար էժան չը նստեց. մի և նոյն գիշերվան մէջ երկու սարսափելի դժբաղդութիւններ գծի վրա հեռևեցին միմեանց, որոնք, բարեբաղդաբար, գոնէ մարդկանց համար անվնաս անցան։ Մի քանի վերստով միայն Կարաեազ կայարանից հեռու, Թիֆլիսից դուրս եկած ճանապարհորդական գնացքը դուրս եկաւ գծից։ Վագոնների սաստիկ ընդհարումից փոստային վագոնը ամբողջապէս ներս մտաւ բագաժների վագոնի մէջ, այդ վերջինին լոլորովին ճարդ ու փշուր անելով. 3-որդ կարգի վագոններից վնասվեցաւ կիսով չափ մէկը միայն։ Կայարանին մօտիկ լինելու պատճառով գնացքը իր արագութիւնը դադարեցրած է եղել և մեքենավարին յաջողվել է չոգեմեքենայի րէլսերից դուրս գալուն պէս դէպի յետ «գնոտը պար» տալու և հէնց այդ երկու բարեկաջող հանգամանքների պատճառով էլ գնացքը իր բաղմաթիւ ճանապարհորդներով ազատվել է անխուսափելի կատաստրոֆայի զոհ գնալուց։ Շոգեմեքենան մասամբ ջարդվել և մինչև խողովակը խրվել է ցեխի մէջ։ Ամբողջ ժամերով տեղ անձրևից րէլսերը խախտվում են իրանց տեղերից. հեղեղը քըշում է նրանցից չատերին. և այդպիսի մի ժամանակ պահապանը յայտնվում է գնացքի առաջ առանց վառած կարմիր լապտերի ամենայն ուժով բղավելով, և այդ էլ ուղղակի կայարանի կանաչ դիսկի մօտ, կառավարչի քթի տակ։ Հետաքրքիր է, էլ ո՞ր օրվայ համար են այդ կարմիր լապտերները, երբ նրանք այդպիսի դէպքերում լոյս չը պիտի ունենան. էլ ո՞ր օրվայ համար են այն կարգադրութիւնները, որ իւրաքանչիւր մի ճանապարհորդական գնացքի կայարանի կառավարիչները կամ նրանց օգնականները պարտաւոր են առաջուց դալ և մինչև կանաչ «դիսկը» ճանապարհը նայել։ Գեղեցիկ եղանակներում գնում են, այո, իսկ այդպիսի ցեխ ու անձրև օրերում ինչ հարկաւոր է նեղութիւն քաշել. երկաթուղու ընկերութիւնը բարի է, նա այդպիսի պարտադանցութիւնների համար նրանցից չի խլի իրանց կարմիր դիսարկը։ Ուրիշ հարց է եթէ վաճառականի ապրանքը մի 2 ժամ աւել մնացել է պլատֆորմի վրա և դրա համար «xpaneniе» չեն առել։ Վերջին երեք ամսվայ ընթացքում Անդրկովկասեան երկաթուղու կայարաններում սպանվեցան տասն և մէկ անձինք. այդ դեռ մեր գիտցածը։ Եւ բոլորն էլ այդպիսի յիմար պատճառներով. մի տեղ մեքենավարը չէ լսում կօնդուկտորի չուացնելուն, մի տեղ պահարանի կարմիր լապտերը ճրագ չունի.... և այլն։

Միւս դժբաղդութիւնը պատահեց Աղստաֆայից 6 վերստ հեռաւորութեամբ դէպի Ցաուգ ճանապարհի վրա։ Ցասն սաժէն լայնութիւն ունեցող մի քարեայ կամուրջ հիմնովին փլուեցաւ։ Կամրջի չորս կողմը ընդարձակ ձոր է, որի միջով այժմ ժամանակաւոր փայտեայ մի կամուրջ են պատրաստում երկաթուղու շպալներից. մի քանի հարիւր բանուորներ գիշեր և ցերեկ անընդհատ 35—40 աստիճան տաքութեան արևի տակ գործում են. և կամուրջը, ապասում են, որ եթէ ոչ վաղը, միւս օր պատրաստ կը լինի։ Գնացքները այդ կամրջի վրայով ուղղակի չեն գնայ, այլ վագոնները ձեռքով պէտք է հրեն մի կողմից միւսը. ամեն 6-ից ճանապարհորդները այդ ձորը անցնում են ոտով և նստում են միւս կողմում իրանց սպասող վագոններում։ Ապրանքների տեղափոխութիւնը գծի վրա մինչև Աղստաֆա բոլորովին ընդհատվել է։ Ցիրում է մի տեսակ մեռելային անշարժութիւն։ Բայց և այնպէս իւրաքանչիւր րօպէ առաջին կարգի մի գեղեցիկ վագոն գնում է այստեղից փլուածքի տեղը և յետ դառնում լի ինժէնէրներով, որոնց համար օր է բացվել....

Մօտիկ մի հայ գիւղում հեղեղը տարել է տասնից աւելի մարդիկ, և ոչխարների մի ամբողջ հօտ իր հովիւներով միասին։

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՑ

Շուշի, օգոստոսի 5-ին

Թէ մինչև որ ատիճան մեր հոգաբարձուները և տիրացու տեսուչները ճնշում, հարստահարում են մեր խեղճ ուսուցիչներին և վարժուհիներին, թէ մինչև որ ատիճան կրթութեան գործի մէջ մտցնվում է անբարոյականութիւն, դրա չօշափելի ապացոյց կարող է ծառայել այստեղի հայոց դպրոցների ինքնակոչ հոգաբարձութեան և տիրացու-տեսչի (մի ինչ որ Սամուէլեան) մի նոր կարգադրութիւնը, որը որքան և ծիծաղելի, այնքան և ցաւալի է։ Արդարև խիստ ցաւալի է, որ հոգաբարձութիւնը, որի ժամանակը վաղուց լրացած է, թոյլ է տալիս իրան դեռ խառնվելու գործերի մէջ, և կրկնակի ցաւալի է, որ մի այդպիսի արկածախնդիր և տիրացու մարդ յանդգնում է անպատուել տեսչական վեհ պաշտօնը։

Ամբողջ տարի թեմական դպրանոցի մէջ կատարվում էր մի խուլ պայքար տեսչի և ուսուցչական խմբի մէջ։ Փոքր ի շատէ կրթված, պարտաճանաչ ուսուցիչները, որոնք ծառայում էին ոչ իբրև վարձկաններ, չէին կարող անվրդով կերպով տանել, որ դպրանոցի ղեկը յանձնված է մի անձի, որը մի հատարակ ծխական դպրոցի վկայական անգամ չունի և որը մի 6—8 ամիս մնալով իբրև թէ արտասահմանում, և պարապելով այնտեղ ով գիտէ ինչով, հաշակում է ամեն տեղ իր անձը իբրև երևելի մարկավարժ, և ուսեալ Գերմանիայում։ Պարոն տեսչի մանկավարժական ընդունակութեան և բարոյականութեան մի քանի նմուշ առաջ բերենք։ Թեմական դպրանոցի մէջ յաճախ պատահում է կօշիկների գողութիւն։ Ծնողները գանգատում են. տեսուչը փոխանակ հարկաւոր միջոցները ձեռք առնելու, աղղեալու աշակերտների վրա բարոյապէս, որ միմեանց կօշիկները չը գողանան, ինքնագլուխ, առանց մանկավարժական ժողովի հաւանութեան, կարգադրում է, որ ամեն անգամ երբ գողութիւն է պատահում, դասատան ամբողջ աշակերտները պատասխանատու ճանաչելով, ամեն աշակերտից առնվի որոշ գումար, մինչև լրանայ կօշիկների գինը, իսկ ով որ աշակերտներից չը վճարէ փողը, արտաքսվի։ Ուսուցչական խումբը ընդդիմանում է և ներկայացնում է տեսչին այն մանկավարժական խորհրդածութիւնները, որոնց հիման վրա այդ միջոցի գործադրութիւնը անյարմար և անբարոյական է գտնում. տեսուչը անմիջապէս բողոքում է հոգաբարձութեան, որ ուսուցիչներից ոմանք ընդդիմանում են իր հրամանին և առաջարկում է արտաքսել. հոգաբարձութիւնն ևս պաշտօնական հրաման է գրում. «Ով որ կօշիկների կարգադրութեան մասին չը հնազանդէ տեսչին, արձակեալ է»։

Մի ուրիշ փաստ։ Արկածախնդիր տեսուչը, կամենալով տեսչական պաշտօնը ժառանգական շինել և մինչև իր մահը վարել, զանազան շողոքորթութեամբ, խորամանկ և այլ միջոցներով համոզում է մի քանի աղաներին և պարզամիտ ու անհեռատես հոգաբարձուներին թէ՝ եթէ իրան մշանջենաւոր տեսուչ նշանակեն, մի և նոյն ժամանակ քահանայ ձեռնադրեն և քարոզիչ կարգեն, տարեկան 1600 ռուբլիով, Ղարաբաղի ժողովուրդը մի երկու տարում կը լուսաւորվի։ Խնդրագիրը խմբագրում է ինքն և ահա աղաները տունէտուն ընկած, բաղարում, խուլ անկիւններում, խաբելով հասարակ ժողովրդեան և չը բացատրելով նրան գործի էութիւնը և խնդրագրի բովանդակութիւնը, ստորագրել են տալիս։ Հաւաքվում է մօտ 600 ստորագրութիւն, բայց, դժբախտաբար, ստորագրողներից մի քանիսը ցանկութիւն յայտնելով կարդալ և նկատելով, որ այդ խնդրագրի մէջ ստորագրողները պարտաւորվում են տարեկան վճարել նրան 1600 ռուբլի, իսկոյն գործը բացվում է և զայրացած ժողովուրդը պատառ պատառ է անում թուղթը։

Բայց էլի մի քանի փաստեր։

Մինչև ամբողջ ժողովուրդը սպասում էր, որ, պակի բան անես... Ա՛ռ, առ։

Նա կրկին ճանգ արաւ։

Նախշունը յուսահատված գլուխը կախ դցեց, կարմրեց. նա լաց էր լինում։

Անկողինները պատրաստ էին, մարդ ու կնիկ նստեցին, Նախշունը մնաց կանգնած։ Համբարձումը սաստիկ ոլորում էր իր բեխերը, երբեմն և բռնում էր քիթը, բթամատը կոխում էր քթի ծակը և որպէս թէ քորում էր այդ տեղերը։ Նազլուն մի քանի անգամ «ախ» քաշեց, նայեց թափված պատի բացած ծակին։ «Վերջը պիտի մեզ կոտորէ այս աւերակը», ասաց նա մի քանի անգամ թոյլ ձայնով։

—Ա՛յ կնիկ, ինչ է եկել քեզ, մի քիչ կակուղ խօսելը քեզ տուած չէ։ Սա մի խորհուրդ է դեռ, որ անում ենք, բայց դու հէնց կռուի ես նստել։ Ի՞նչ անենք, ուստ մօտ գնանք, ես չեմ աշխատում, դու չես աշխատում... Բայց որ երկուսիս աշխատանքով հազիւ ենք կարողանում այսպէս ապրել, ուստ ինչ անենք, Աստուծու հետ գնանք կռիւ տանք.... Ես ասում եմ, ինչ կայ, քառասուն մանէթը մեծ պարաք չէ. ամիսը հինգ ռուբլի են տալիս, թող գնայ մի ուրիշ ամիս ծառայէ, լաւ ուտէ, լաւ հագնի։ Փառք Աստուծու, աղանելի տունը իսօ ճանաչում ես. ասես արքայութիւն լինի. մի քանի անգամ մտել եմ բակը, տեսել. ամեն ինչ կարգին, սարքին. ամեն մարդ իր բանը իմանում է, գլուխը կախ իրան համար է գործում, մի խօսքով մեր քաղաքի առաջին տունն է. ծիտն էլ որ ծիա է, չէ կարող մի հացի հատիկ գողանալ։ Ուրեմ ամսից յետոյ էլի մեր աղջիկն է, մեր տանը կը լինի։ Գուցէ ես էլ կարողանամ մինչև այդ ժամանակը գոնէ մի էշ առնեմ, օրական մի բեռը փայտ բերեմ ծախեմ։

—Ես այսօր մերժել եմ, ասել եմ այդպիսի աղջիկ չունեմ, ասաց Նազլուն վերջնականապէս և վերմակը գլխին գցեց, հրամայելով Նախշունին ճրագը հանգցնել։

—Ի՞նչ անենք թէ ասել ես, իսօսեց մի քառորդ ժամից յետոյ Համբարձումը և պինդ հազաց, որպէս զի եթէ կինը քնած էլ լինի, զարթնի։—Ինչ անենք, հիմա էլ կասենք թէ ունենք։

—Դու դիտես, աղջիկը քոնն է... ինձ ոչինչ մի ասիր։

Եւ Նազլուն բոլորովին լռեց։

(Կը շարունակվի)

—Չը կայ ու թող չը լինի, Աստուած կորի... Ինչի՞ ենք սպասում, վեր կենանք անկողին մըտնենք, քնենք. գուցէ քաղցած փորներս մոռանանք։

Համբարձումի դէմքը աւելի ևս թթուեց. նրան խիստ զայրացնում էին այդ տեսակ խօսքերը։ Ախր ինչ հարկաւոր էր ասելը, միթէ ինքը չը գիտէ որ այդպէս պէտք է ասել։ Բոլորովին իզուր է խօսելը, մարդու սիրտն է միայն պղտորում։ Բայց Նազլուն վերկացաւ, դուրս գնաց։

Անձրևը սաստկացաւ։ Արդէն կտուրից մի քանի տեղ կաթում էր տան մէջ։ Նազլուն ներս մտաւ և դուռը սաստիկ զարկեց իր ետևից։ Դեռ այդ ձայնը չը վերջացած, տան կողքից մի աւելի բարձր ձայն եկաւ, քարեր թափվելու ձայն։ Նազլուն ու աղջիկը սարսափած ճիչ բարձրացրին և վազեցին դէպի Համբարձումը։ Բոլորը մի րօպէում իմացան, որ տունը քանդվում է։ Ցանտերը չը գիտէր ինչ անել, ձայն ու ծպուտը կտրել էր։

Երեք հոգի անշարժ կուչ էին եկել պատի տակ։

Բայց տունը ամբողջովին չը քանդվեց։ Ալ կողմի պատն էր թափվել, այդ չուտով յայտնի դառաւ. մի փոքրիկ ծակ բացվեցաւ առաստաղի և պատի մէջտեղը. անձրևը սկսեց թափվել այդ տեղով, ճրագը յուսահատ պլպլաց։

Համբարձումը վերջապէս ինքն իրան դատաւ, սիրտ տուեց կնոջն ու աղջկան, միամտացնելով թէ վտանգն անցաւ, այլ ևս պատը չէ թափվելու։ Բայց Նազլուն դառն ու սարսափահար դէմքով մնաց տեղը մեխված, կարծես գիտէր որ սոսկալի վերջը մի րօպէից, մի վայրկեանից յետոյ վրա կը հասնի։ Համբարձումը դուրս գնաց և շուտով յետ դառաւ և կրկնեց իր խօսքերը։ Այդ ժամանակ միայն նստեց նրա կինը։

—Աստուած էիր այսօր էլի եկաւ, հա՛։

—Իրիդնապահին էր, եկաւ, չէ՞քը կտրեց... Կորվի նրա սատանայի երեսը։

—Ես պահանջեց էլի, հարցրեց Համբարձումը խիստ անհանգիստ կերպով նայելով իր կնոջ դէմքին։

—Հարիւր անգամ խօ չես հարցնելու։ Ասացի, որ էլ բան չը մնաց որ չասէր. դատ, դատաստան, ամեն ինչը անիծուածը այնպէս անդիր է արել....

Համբարձումն էլ ոչինչ չունէր ասելու։

—Իսկ ես չը խօսեցի, շարունակեց Նազլուն. —ինչ ասէի, Դաբրիել հրեշտակը խօսէ նրա հետ։

—Կէսօրին էլ է եկել, երբ մայրիկը տանը չէր, բոլոր բակը շրջեց, ինքն իրան խօսում էր,—մէջ մտաւ աղջիկը։

—Լռիր, Նախշուն, սատեց հայրը,—դու լռիր, դա քո գործը չէ, պատիւդ պահիր, գլուխդ կախ արած բանիդ կաց։

—Այդ մի ասիր, ամեն բանի մէջ պիտի խառնվի ծամ կարածը, ասաց Նազլուն ճանգ անելով Նախշունի դէմքին.—ասիր ու ասիր....

Այդ րօպէին նրա աչքն ընկաւ աղջկայ վերնազգեստի մի տեղին, որ նոր էր պատռվել։

—Դա էլ պատռեցիր, գոչեց նա.—մի բուռն մոխիր քեզ ծածկի, անտերես, անզգամ. միտք չես անում, թէ որ պատռում եմ, ուրտեղից եմ գտնելու նորը։ Գոնէ դարդ իմանաս, միանդամից միանգամ գուլբաղ ձեռքդ առնես, որ մի երկու կօպեկի բան անես... Ա՛ռ, առ։

Նա կրկին ճանգ արաւ։

Նախշունը յուսահատված գլուխը կախ դցեց, կարմրեց. նա լաց էր լինում։

Անկողինները պատրաստ էին, մարդ ու կնիկ նստեցին, Նախշունը մնաց կանգնած։ Համբարձումը սաստիկ ոլորում էր իր բեխերը, երբեմն և բռնում էր քիթը, բթամատը կոխում էր քթի ծակը և որպէս թէ քորում էր այդ տեղերը։ Նազլուն մի քանի անգամ «ախ» քաշեց, նայեց թափված պատի բացած ծակին։ «Վերջը պիտի մեզ կոտորէ այս աւերակը», ասաց նա մի քանի անգամ թոյլ ձայնով։

—Ա՛յ կնիկ, ինչ է եկել քեզ, մի քիչ կակուղ խօսելը քեզ տուած չէ։ Սա մի խորհուրդ է դեռ, որ անում ենք, բայց դու հէնց կռուի ես նստել։ Ի՞նչ անենք, ուստ մօտ գնանք, ես չեմ աշխատում, դու չես աշխատում... Բայց որ երկուսիս աշխատանքով հազիւ ենք կարողանում այսպէս ապրել, ուստ ինչ անենք, Աստուծու հետ գնանք կռիւ տանք.... Ես ասում եմ, ինչ կայ, քառասուն մանէթը մեծ պարաք չէ. ամիսը հինգ ռուբլի են տալիս, թող գնայ մի ուրիշ ամիս ծառայէ, լաւ ուտէ, լաւ հագնի։ Փառք Աստուծու, աղանելի տունը իսօ ճանաչում ես. ասես արքայութիւն լինի. մի քանի անգամ մտել եմ բակը, տեսել. ամեն ինչ կարգին, սարքին. ամեն մարդ իր բանը իմանում է, գլուխը կախ իրան համար է գործում, մի խօսքով մեր քաղաքի առաջին տունն է. ծիտն էլ որ ծիա է, չէ կարող մի հացի հատիկ գողանալ։ Ուրեմ ամսից յետոյ էլի մեր աղջիկն է, մեր տանը կը լինի։ Գուցէ ես էլ կարողանամ մինչև այդ ժամանակը գոնէ մի էշ առնեմ, օրական մի բեռը փայտ բերեմ ծախեմ։

—Ես այսօր մերժել եմ, ասել եմ այդպիսի աղջիկ չունեմ, ասաց Նազլուն վերջնականապէս և վերմակը գլխին գցեց, հրամայելով Նախշունին ճրագը հանգցնել։

—Ի՞նչ անենք թէ ասել ես, իսօսեց մի քառորդ ժամից յետոյ Համբարձումը և պինդ հազաց, որպէս զի եթէ կինը քնած էլ լինի, զարթնի։—Ինչ անենք, հիմա էլ կասենք թէ ունենք։

—Դու դիտես, աղջիկը քոնն է... ինձ ոչինչ մի ասիր։

Եւ Նազլուն բոլորովին լռեց։

(Կը շարունակվի)

վերջապէս, լացած լինելով հին հոգաբարձութեան և տեսչի ժամանակը, դպրոցը կը մաքրվի տիրացուներից և տգէտներից, կընտրվի նոր հոգաբարձութիւն, նոր տեսուչ և կը կազմվի աւելի լաւ ուսուցչական խումբ, ահա հոգաբարձութիւնը օգուտ քաղելով նոր առաջնորդի ուշանալուց և չը գիտենք ինչ ֆօկուս հնարելով, նորից տեսուչ է նշանակում հին տեսչին, բայց այս անգամ լիազօր, անպայման իրաւունքներով։ Զլնված այդ տեսակ լիազօրութեամբ, ինքնակոչ տեսուչը (հոգաբարձութիւնը չունենալով իրաւունք գործելու, նրա ընտրութիւններն ևս ապօրէն են) աճապարում է հեռացնել դպրոցներից այն ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որոնք համարձակում էին «դատողութիւն» ունենալ և տեսչի պակասութիւնները նշմարել։ Նա դրա համար հետևեալ հնարն է մտածում. գրում է զանազան պայմաններ, ժողովում է բոլոր ուսուցիչներին և վարժուհիներին և առաջարկում է. «ով որ կը ստորագրէ այս պայմանները և կը համաձայնէ կատարել, նա կը մնայ, ով որ ոչ, կը հեռացվի»։

Ահա այդ պայմաններից մի քանիսը. 1) անպայման հնազանդել տեսչի բոլոր կարգադրութիւններին. 2) վարել համեստ կեանք դպրոցից դուրս, յաճախելով միայն այն տեղերը, որ կը թոյլատրէ տեսուչը, իսկ դրսից եկած ուսուցիչների և վարժուհիների համար—յաճախել միմիայն այն ընտանիքները, որոնց վրա մատնացոյց կը լինի տեսուչը. 3) թատրօնական ներկայացումներին չը գնալ. 4) դպրոցի շահերը (sic) ամենից վեր դասելով տեսուչը ունի իրաւունք ամեն ժամ, ամեն րոպէ, ըստ իր նկատողութեան, արձակելու ում որ կամենայ, վճարելով միայն մինչև այն օրը, երբ նա արձակվում է. 5) բացի «Աբրամ» տարեգրից ուրիշ ոչ մի լրագիր չը կարդալ. 5) տարին 4 անգամ խոստովանվել և հաղորդվել, ու շաբաթը 2 անգամ եկեղեցի գնալ. 7) վարժուհիները իրաւունք չունեն փողոցներում մեն գալ, բացի այն օրերը, երբ եկեղեցի են գնում։

Երկար և ձանձրացուցիչ կը լինէր մի առ մի չարել բոլոր պայմանները, ինչպէս է որ վարժուհիները միասին պէտք է ապրեն, «հնազանդ» պահեն իրանց և այլն, և այլն։

Եւ որովհետև այդպիսի անմիտ, ծիծաղելի և վիրաւորիչ պայմանները ոչ մի ազնիւ և բարեխիղճ ուսուցիչ կամ վարժուհի չէր կարող ընդունել, ուստի փիլիսոփայ-տեսուչը հասնում է իր նպատակին—հեռացնել դպրոցից փոքր ի շատէ լաւ ոյժերը։ Այժմ պ. տեսուչը գնալով Թիֆլիս, վերոյիշեալ պայմանները ձեռքին, աշխատում է հազար ու մէկ մանուածապատ միջոցներով, զանազան անկիւններում, ուսուցիչներ, վարժուհիներ վարձել, և այդ որքան կարելի է շուտ, որպէս զի դրանով հոգաբարձութեան ապօրինի ընտրութիւնը հաստատութիւն ստանայ։

Ստիպված լինելով այս խայտառակ ճշմարտութիւնները երևան հանել, յոյս ունենք, որ նորընտիր առաջնորդը, որը այս օրերս Շուշի պէտք է հասնի, ուշադրութիւն կը դարձնէ այդ տխուր վիճակի վրա և կը մաքրէ դպրոցները ընդ միշտ այդպիսիներից։ Իսկ այն ուսուցիչներին, որոնք պարզամտութիւն կունենային ընկնել այդ տեսակ մարդու սարքած ծուղակը, խորհուրդ կը տանք զգոյշ վարվել, որովհետև «դպրոցի շահ» խօսքը այդպիսի մարդկանց ձեռքում միշտ մի վտանգաւոր զէնք կարող է լինել հեռացնելու նրանց, որոնք «սիրելի» և «հլու ծառաներ» չեն լինի։

Եզրակացութիւններ անելը թողնում ենք ընթերցողներին։

Հ. Առաքելեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հետևեալը։ Պետերբուրգում ներկայ տարվայ հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներում հրատարակվելու է «Երասխ» անունով հայերէն պատկերազարդ հանդէս։ Ամեն մի գիրքը բաղկանալու է մօտաւորապէս 200 երեսից ուվթածալ գիրքով։ Տպագրութիւնը, թուղթը և նկարները լինելու են չքեղ։ Բաժանորդագինն է 3 ռուբլի։ «Երասխ» խմբագրվում է գործին ծանօթ անձինքներից հետևեալ ծրագրով։ Կենսական հասարակական խնդիրներ, վէպիկներ, վիպասանութիւններ, կենսագրութիւններ, ճանապարհորդութիւններ, տեղագրական, աշխարհագրական և ժողովրդական գրութիւններ. բանաստեղծութիւններ, թատրօնական գրուածներ. կրիտիկա, մատենագրութիւն, գիտական յօդուածներ, թղթակցութիւններ. հայ և եւրոպական գրականութիւն և նոցա ներկայացուցիչները. քաղաքական տեսութիւն. լրագիրների չուրջը. ազգային յիշատակարան. քրոնիկոն, լուրեր, յայտարարութիւններ։ Հանդիսին մասնակցում են և օտարերկրեայ յայտնի գրողներ։ «Երասխի» վերաբերեալ ամենայն գործերի մասին պէտք է դիմել Սիմէօն Գուլամիրեանցին հետևեալ հասցէով. Петербургъ С. Гуламирянцу (до востребованія).

—

Պետերբուրգի «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ բազմաթիւ երիտասարդներ, որոնք ուսում են առել ոչ Պետերբուրգի շրջանում, այժմ ուղևորվում են արտասահման այնտեղի համալսարանները մտնելու համար։

—

Ամսիս 16-ին, Թիֆլիսի ժողովարանի ամարային շինութեան մէջ անգլիացի իլլիւզիոնիստներ պ.պ. Տօրն և Դարվին մի ներկայացում տուեցին, որին ներկայ էր ահագին բազմութիւն։ Ցեռնածուական ներկայացման մի քանի կտորները բաւական հետաքրքիր էին, և կատարվեցան բաւական հմտութեամբ։

—

Այս օրերս Թիֆլիսով անցաւ դէպի Կարսի նահանգը ռուս գաղթականների մի նոր խումբ։ Գաղթող ընտանիքները վերին աստիճանի աղքատ լինելով և միջոց չունենալով ճանապարհորդելու, ողորմութիւն էին հաւաքում Թիֆլիսում։ Այս նոր խումբը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, ընակութիւն պէտք է հաստատի Սարակամիշի մօտերքում։

—

Ամսիս 15-ին, Թիֆլիսի Խօջիվանք կոչված գերեզմանատան մօտ մի քսանմեկի դէպք պատահեց։ Երեկոյեան, ժամը 10-ին, գերեզմանատան պարսպի մօտ Թիֆլիսի շրջմոլիկներից մէկը կամենում էր բռնաբարել մի պատանու։ Այդ միջոցին պատանու աղաղակների վրա դալիս է մի երիտասարդ, և տեսնելով թէ ինչ է այդ աղաղակի պատճառը, միջամտում է և կամենում է ազատել պատանուն նրա ձեռքից. անխիղճ շրջմոլիկը, առանց երկար մտածելու, հանում է իր դանակը և մի հարուածով պատուում է երիտասարդի փորը։ Վիրաւորված երիտասարդը օգնութիւն է կանչում, և նրա աղաղակների վրա հասնում է մի ուրիշը, և կամենում է օգնութիւն հասցնել։ Պատանուն բռնաբարել ցանկացողը, որը, ինչպէս երևում է, վերին աստիճանի կատաղութեան էր հասել այդ միջոցին, մի քանի րոպէում իր սուր դանակը խրում է մօտացողի կողքի մէջ, որից խեղճը իսկոյն մեռնում է։ Առաջին վիրաւորվածը դեռ կենդանի է, բայց մահամերձ։ Զարագործը կալանաւորված է։

—

Ռուսաստանի արտաքին վաճառականութեան մասին հրատարակված տեղեկութիւնները, որոնք վերցրված են պաշտօնական աղբիւրներից, ցոյց են տալիս, որ ներկայ տարվայ սկզբի հինգ ամիսների ընթացքում արտահանված ապրանքը աւելի շատ է եղել, քան թէ անցեալ տարվայ նոյնքան միջոցում արտահանվածը, և այդ էլ 61 միլիոն ռուբլու արժողութեամբ. իսկ ներմուծված ապրանքը, ընդհակառակը, աւելի քիչ է եղել քան անցեալ տարվանը։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Ժողովրդի անտեսական դրութիւնը Սուրմալուի մէջ ընդհանրապէս վատացել է և մեր գիւղացին իր նիւթական ծանր դրութեան սփոփանքը սկսում է որոնել մասամբ արբեցողութեան մէջ։ Այժմ յետընկած գիւղերումն էլ գինետներ են բացվում, իսկ Իգդիրում ներկայումս 12 գինետուն կայ։ Եթէ այս ցաւալի երևոյթը զարգանայ, կարող է տխուր ապագայ պատրաստել և մեր գիւղական դասակարգի համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՕԼԳԱՐԻԱՆ ԵՒ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Կօբուրգի Ֆերդինանդ իշխանը արդէն Բօլգարիայում է, և համարեա թէ ամբողջապէս իր ձեռքն է առել երկրի կառավարութեան դեկը։ Եւրօպական դիպլօմատիան բողոքում է այդ իրողութեան դէմ, բայց, պէտք է նկատել, որ այդ բողոքը շատ խուլ, և շատ թոյլ է։ Երկու տարի է, որ բօլգարական հարցը հրապարակի վրա է, երկու տարի է, որ Բօլգարիայի իշխանական խնդիրը զբաղեցնում է Եւրօպային.—բայց և այնպէս, չը նայած այդ անսպակի ժամանակամիջոցին, չը նայած այդ առիթով տեղի ունեցած դեսպանաժողովներին և դիպլօմատիական ոգևորված յարաբերութիւններին, կնճռոտ խնդիրը մնում է նոյն դրութեան մէջ, և ամեն կողմից լսվում է միայն մի և նոյն նկատողութիւնը «թէ Բերլինի դաշնագրի հիմունքները խախտվել են այն օրից, երբ դաշնագիրը ստորագրող պետութիւնները դադարեցին միասամ գործելուց. իսկ այդ բանը վաղուց արդէն տեղի է ունեցել։ Եւրօպական գլխաւոր պետութիւնների այժմեան ընթացքի և գործունէութեան ուղեցոյցը ոչ թէ Բերլինի դաշնագիրն է, այլ իրանց սեփական շահերը, որոնք և բաժան բաժան են արել պետութիւնների գործունէութիւնը։ Այդ շատ լաւ զգում է ինքը ամբողջ Եւրօպան, այդ շատ լաւ զգում է Բալկանը, այդ շատ լաւ զգում է և Բօլգարիան, որի վերջին պատմութիւնները միանգամայն հաստատում են այդ ճշմարտութիւնը։ Ֆերդինանդի Բօլգարիա գալու սկզբի րոպէներում ընդհանուր տրտունջ յարուցվեց դիպլօմատիական շրջանակներում, բայց չը նայած այդ տրտունջին, Կօբուրգի պրինցը ուղղակի Սօֆիա գնաց, գուցէ հաստատ փատեր ունենալով իր ձեռքում, որ մեծ պետութիւնները չեն միանայ Բօլգարիայի դէմ գործելու հարցում։ Եւ այդ այդպէս էլ եղաւ. բացի Ռուսաստանից, և մասամբ Ֆրանսիայից, միւս պետութիւնները որոշ դիրք չեն բռնում. հեռագիրների լուրերը և լրագրական բաւական հաստատ տեղեկութիւնները միմեանց հակասում են։ Իսկ վերջին լուրերը փոքր առ փոքր իրականացնում են նախկին կասկածները։ Աւստրիան չէ կամենում յետ կանչել իր դիպլօմատիական գործակալներին. նոյնն են անում Անգլիան և Իտալիան. Գերմանիան դեռ մի շատ փոքր ցոյց է միայն արել. իսկ Թուրքիան այլ ևս չէ կամենում շարունակել իր սկսածը և վճռել է սպասող դիրք բռնել։ Ի հարկէ այդ բոլորը շատ լաւ գիտեն Բօլգարիայի գործիչները. այդ լաւ գիտէ և Կօբուրգի պրինցը, որը իր բոլոր ուշադրութիւնը դարձրել է դէպի երկրի ներսը, և աշխատում է իր հետ հաշտեցնել քաղաքական բոլոր կուսակցութիւններին, իր հետ կապել երկրի զինուորական և վարչական ոյժերը։

Եթէ այս ընթացքով շարունակվի, ի հարկէ, պետութիւնները բուռն ճնշում գործ չեն դնի, և մի փոքր ժամանակից յետոյ, երբ արդէն բօլգարական խնդիրը մի փոքր խաղաղ կերպարանք կը ստանայ, նոյն եւրօպական պետութիւններից շատերը քաղաքական նոր խնդիրներ կը յարուցանեն, Բալկանի վրա նոր հարցեր կը ծնեցնեն հէնց այն հիման վրա, որ «Բերլինի կօնգրէսի հիմունքները արդէն խախտված են»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագրի Սօֆիայի թղթակիցը օգոստոսի 5-ից հեռագրում է հետևեալը։ «Տիրնօվօյում տեղի ունեցած զինուորական բանկետում պատերազմական մինիստրը խմեց պրինց Ֆերդինանդի կենացը, և ապա կոտրեց բաժակը, սկսեց սաներով կոխ տալ կոտրտանքները, և դառնալով դէպի պրինցը ասեց. «Մենք պատրաստ ենք քեզ համար ամեն նեղութիւն կրել, ինչպէս այս կոտրած բաժակի կոտրտանքները»։ Այդ խօսքեր ասողը սկզբում Բատենբերգի ամենաջերմ կուսակիցն էր։

—«Neue Freie Presse» լրագիրը խօսելով բօլգարական գործերի մասին, այն միտքն է յայտնում, որ Աւստրիան իր դիպլօմատիական գործակալին Սօֆիայից յետ չի կանչի։ Լրագրի կարծիքով դրա օրինակին կը հետևեն Իտալիան և Անգլիան։ Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային, յիշեալ լրագիրը առ այժմ չէ կարողանում որոշ կերպով յայտնել թէ ինչ դիրք կը բռնի Բիսմարկ։ Վերջին հեռագիրներից արդէն յայտնի է, որ Գերմանիան այդ գործում չէ հետևում. ոչ Անգլիային և ոչ էլ գուցէ Աւստրիային։

—Սիլիստրիայում բացված է զինուորականների վոքրիկ դաւադրութիւն։ Դաւադիրները ձերբակալված են։

—Աւստրիական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ Արթին-էֆէնդին չի գնայ Բօլգարիա իբրև թիւրքաց կօմիսար, որովհետև Թիւրքիան մտադիր է սպասող դիրք բռնել։

—Բերլինի մի քանի լրագիրները չեչտելով վերջին ժամանակներում Անգլիայի և Ռուսաստանի մէջ նկատվող բարեկամական յարաբերութիւնների վրա, հաղորդում են, որ Անգլիան և Ռուսաստանը փոխադարձաբար թոյլ են տալիս միմեանց ազատ գործելու. Անգլիան չը պէտք է խառնվի Ռուսաստանի գործերում Բալկանեան թերակղզու վրա, իսկ Ռուսաստանը լռութիւն պէտք է պահի այն բոլորի վերաբերութեամբ, ինչ որ Անգլիան կը ցանկանայ կատարել Եգիպտոսում։

—Արդէն պատրաստութիւններ են տեսնվում Միացեալ-Նահանգների նախագահ ընտրելու համար։ Այդ բարձր պաշտօնի համար այժմ արդէն մի քանի կանդիդատներ կան, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում են Բլէն, Շերման՝ հանրապետականների կողմից, և Կլէվելէնդ՝ դեմոկրատականների կողմից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդոնի բրիտանական մուզէումի մէջ մի հետաքրքիր մաս է կազմում խաղալու թղթերի ժողովածուն։ Այդտեղ կան XIV-որդ դարում գործածվող խաղալիքներ, որոնց թէ ձևը և թէ մանաւանդ պատկերները շատ ահռելի դիրք ունեն. բայց այդ հին թղթախաղերի մէջ ֆրանսիականը աչքի է ընկնում իր գեղեցկութեամբ։ Այդ ժողովածուի մէջ կան և հնդկական խաղալիքներ, որոնք կազմված են արծաթեայ թերթերից. խաղնական հին խաղաթղթերի մէջ կանանց պատկերներ միանգամայն չը կան։ Անգլիական հին խաղաթղթերի վրա նկարված են այն ժամանակի նշանաւոր մարդոց և թագաւորների պատկերները, մինչև անգամ գրված են քերականական կանոններ և աշխարհագրական նկարագրութիւններ։ Այդ խաղաթղթերից շատերի վրա մանրամասնաբար նկարագրված է թէ ինչպէս պէտք է կոտրել զանազան տեսակ ուտելեղէններ, ինչպէս ձուկ, հաւ և ուրիշ բաներ, և կամ թէ ինչպէս և ինչ սօուսով պէտք է կերակուրը սեղանի վրա բերել։

* * *

Նորերումս Պետերբուրգի հիւանդանոցներից մէկին մի երիտասարդ յանձնվեցաւ, որը խելագար է, և խելագարութեան պատճառն էլ 200,000 խաղարկութեան չարագուշակ տոմսակն է։ Խեղճ երիտասարդը, որ միշտ երազում էր յանկարծ հարստանալ, մի քանի տարուց ի վեր արդէն ունի մի խաղարկութեան տոմսակ, որի մէջ է ամփոփված իր ամբողջ կեանքը։ Ցաւալին այն է, որ սովորաբար այն հաստատը, որը տանում էր 200,000-ը, շատ մօտ էր լինում երիտասարդի տոմսակի համարին. իսկ վերջին խաղարկութեան ժամանակ տարբերութիւնը միայն մի միաւոր էր—և այդ բանը այնպէս խիստ ազդեց հարստանալու ձգտում ունեցող երիտասարդի վրա, որ նա ստիպվեցաւ գնալ դէպի հիւանդանոց, փոխանակ գնալու դէպի իր երազած չքեղ ընակարանը....

* * *

«Համաշխարհային լեզուի» (Վօլապիւկի) կողմնակիցներ Միւնխէնում կազմած ժողովը վճռեց հիմնել վօլապիւկիստների համաշխարհային կլուբ, և թոշակ նշանակել այդ նոր լեզուի հիմնադիր Շլէյերին։

* * *

Սիցիլիայում, մի գիւղական եկեղեցում, կաթոլիկ քահանան քարոզ էր կարդում վերին աստիճանի ոգևորութեամբ, խօսելով դժոխային տանջանքների մասին. քահանան յանկարծ ոգևորութեամբ գոչեց՝ «Ecco il diavolo» (ահա սատանան)։ Եւ հէնց այդ րոպէին սեղանի մօտ երևեցաւ սատանան, մի բարձր, սև արարած, երկու եղջիւր գլխին, փայլուն աչքերով, և մի երկար պոչով։ Ներկայ եղողները սարսափահար եղած՝ սկսեցին դուրս փախչել եկեղեցուց. այն միջոցին սկսվեցաւ մի սարսափելի իրարանցում, որից շատերը ընկան և վէրքեր ստացան։ Քննութիւններից երևեցաւ, որ քահանան կամենալով որ իր քարոզը մեծ տպաւորութիւն գործի, իր ծխականներից մէկին սատանայ էր դարձրել։ Քահանան և իր համախոհները այդ անտեղի սրամտութեան համար բանտ հրաւիրվեցան։

* * *

Խօլերան շարունակվում է տարածվել Աղրիատիական ծովի ափերի մօտ, և ամբոխի ագիտութիւնը աւելի է նպաստում այդ վտանգաւոր հիւանդութեան զօրանալուն։ Աղգաբնակութեան մի նշանաւոր մասը ուրիշ միջոց չը գիտէ, բայց եթէ փախչել բաղմամարդ տեղերից, այդպէս օրինակ Պատէրնօ կոչված քաղաքը, որը ունի մօտ 20,000 բնակիչ, նորերումս բոլորովին դատարկվեցաւ, ըստ որում ամենքն էլ փախչում են քաղաքից՝ խօլերայի երկիւղի աղդեցութեան տակ։ Այդ նոյն քաղաքի փողոցներով գիշերները անցնել չէ կարելի, որովհետև տգէտ և նախապաշարված քաղաքացիները իրանց փակած տների պատուհաններից հրացաններով խփում են անցնողներին, «խօլերան հալածելու» նպատակով։ Կառավարութիւնը մեծ նեղութիւն է կրում և այնու ամենայնիւ չէ կարողանում զգուշութեան միջոցներ գործ դնել տալ. մի քանի ժամանակ առաջ ձերբակալվեցաւ մի մարդ, որը իր էշի վրա կապած տանում էր իր կնոջ սեացած դիակը, որը մեռել էր խօլերայից։ Ամբոխի ագիտութիւնը կրկնապատկում է խօլերայի տարածվելու ոյժը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի։ Իր արկածներով յայտնի՝ հրաժարված կօրնէլ Սավին, որը մեղադրվում է գողութիւնների մէջ, արդարացվեցաւ. դեռ էլի պէտք է քննվեն Սավինի քանի մի գործերը, ի միջի որոց և այն, որ նա կրակ է գցել Կալուգայում մի տուն և Կ. Պօլսում անպատուել է մի փաշայի։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 14 օգոստոսի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները այսօր այստեղ հասան կէսօրից յետոյ ժամը 1-ին։ Նոցա Կայսերական Մեծութիւններին դիմաւորեց Դանիայի թագաւորը, թագաժառանգը և յունաց թագաւորը, մի գունդ ծովազօրքի ուղեկցութեամբ։ Ափը իջնելուն պէս թագաւոր Կայսրին և թագուհի Կայսրուհուն դիմաւորեցին Դանիայի թագուհին և թագաւորական տան իշխանուհիք։ Օգոստափառ հիւրերը՝ դրօշակներով չքեղ զարդարված քաղաքով անցնելով, գնացին Ֆրէդենսբօրգ ամրոցը։

ԼՕՆԴՕՆ, 15 օգոստոսի։ Գերմանական թագաժառանգ իշխանուհին, որը մի քանի օր առաջ Պօրտսմուտ էր գնացել, այնտեղից վերադառնալիս՝ նաւը, որով նա գալիս էր ընդհարվեցաւ «Inkercible» նաւի հետ։ Իշխանուհին ստիպվեցաւ դրանից յետոյ ճանապարհը շարունակել մի ուրիշ նաւով։ Համայնքների ժողովը մերժեց Գլադստոնի՝ ազգային միութեան ապօրինութեան վերաբերեալ կառավարչական պրոկլամացիայի դէմ արած առաջարկութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ, 16 օգոստոսի։ (Վարնայի միջով)։ Այն շրջաբերականի մէջ, որ կուղարկվի այսօր, Բ. Դուռը հաստատում է նոյնը, ինչ որ Ռուսաստանը պատասխանեց նրա վերջին առաջարկութեանը։ Ռուսաստանը առաջարկում է նշանակել մի խնամակալ, որը մի և նոյն ժամանակ կը լինէր Արևելեան-Ռումելիայի նահանգապետ, ինչպէս որ այդ որոշված էր Թօփխանէում կայացած կոնֆերէնցիայում։ Խնամակալը պիտի նոյն իրաւունքներն ունենայ, ինչ որ ունի իշխանը։ Խնամակալը, Բուլգարիա գալուն պէս, պէտք է նոր մինիստրութիւն նշանակէ և հրամանագրէ ազգային ժողովին նոր ընտրութիւններ նշանակել իշխան ընտրելու համար։ Երէկ Բ. Դուռը վերջնականապէս յայտնեց պետութիւնների ներկայացուցիչներին, որ ինքն մտադրութիւն չունի ինքնագլուխ միջամտել բուլգարական հարցում, մինչև որ պետութիւնները միմեանց մէջ համաձայնութիւն չեն կայացնի։

ՍՕՖԻԱ, 16 օգոստոսի։ Որ և է աչքի ընկնող բան վերջին օրերս չէ պատահել։ Սկզբում Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Բ. Դրան գործունէութեան եղանակը մեծ տպաւորութիւն գործեց պաշտօնական շրջաններում, բայց յետոյ փոփոխութիւն առաջ եկաւ, որ հետևանք էր այն համոզման, որ Աւստրիան, Անգլիան և Իտալիան ընդդէմ են այն հարկադրիչ միջոցներին, որ կարող են առաջարկված լինել։ Սակայն ներքին դրութիւնը բարդվում է, չը խօսելով արդէն ցանկօվիստների գործունէութեան եղանակի մասին, որոնց չուտով կը նպաստեն պաշարման դրութեան վերացնելը և ընտրութիւնների համար պատրաստութիւնները։ Գոյութիւն ունեն անձնական տարաձայնութիւններ, որ վնասակար ազդեցութիւն են անում նոր կարգերի հաստատման վրա։—Ստոիլով և Նաչեվիչ վերջնականապէս վրձռեցին գործերից հեռանալ, իսկ Ստամբուլով հրաժարվում է մասնակցել վարչութեանը, թէպէտ և վաղը Սոֆիա կը գայ այն նոր մինիստրութեան կազմակերպութեանը նպաստելու համար, որի հոգին կը լինի Տոնչէվ։ Եւ որովհետև այն տարրերը, որոնցից կազմված կը լինի նոր մինիստրութիւնը, պատշաճաւոր ազդեցութիւն չեն ունենայ ընտրութիւնները ղեկավարելու համար,—ընտրողական շրջանը փոխարկալից լինաւորութիւն կունենայ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Օգոստոսի 14-ին

Ռուսաց 1 բուբլ. Լօնդօնի վրա տրժէ	$21^1/_4$	պենս.	
— — Համբուրգի վրա —	$180^1/_4$	պֆ.	
— — Փարիզի վրա —	$224^1/_2$	սան.	
Ոսկի — տրժէ — —	9	›	22 կ.
Մաքսային կուպօններ — . .	179	›	25 ›
Արծաթ — — — . . .	1	›	30 ›
Բօրսայինն դիսկօնտներ — . .	$4^1/_2$	›	$6^1/_2$% ›
Պետական. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	›	87 ›
— — — — 2-րդ —	99	›	25 ›
— — — — 3-րդ —	99	»	12 ›
— — — — 4-րդ —	99	›	25 ›
— — — — 5-րդ —	99	›	25 ›
— — — — 6-րդ —	—	›	— ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	›	— ›
— — 2-րդ —	99	›	12 ›
— — 3-րդ —	99	›	— ›
Ներքին 5% առաջին փոխառութ.	275	›	50 ›
— երկրորդ —	255	›	50 ›
$5^1/_2$% բէնտա	102	›	25 ›
Ոսկեայ բէնտա	193	›	25 ›
Եօթներորդ կոնսոլիդատ. փոխառութիւն	166	›	25 ›
Նոր երկաթուղային բէնտա . .	99	›	25 ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	166	›	— »
Գրաւ. թղ. Ազնվ. բանկի . . .	98	›	62 ›
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսոնի կալուածոց բանկի.	99	›	25 ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	103	›	25 ›
— — Պօլտավայի — —	103	›	— ›
— — Պենզ. Տուլսկ. — —	102	›	75 ›
— — Կիևի — —	102	›	50 ›
— — Մոսկվայի — —	102	›	75 ›
— — Բեսարաբ. Տաւրիդ. —	103	›	— ›
— — Նիժ. Նովգոր. —	102	›	50 ›
— — Վիլնայի —	102	›	50 ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	94	»	25 ›
— —Քութայիսի-18 և 43 տ.	94	›	25 ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	735	›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	271	›	75 ›
Բիբինսկ-Վոլգայի ընկ.	85	›	75 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	95	›	75 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	96	›	50 ›
Օդէսայի — — .	96	›	50 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	75	›	83 ›
Նոր փոխառութիւն.	84	›	12 ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱԳԵՆՏՆԵՐԸ

Գաւառներում հրաւիրվում են ձեռնտու պայմաններով, բանկային գործերը ընդարձակելու համար։ Դիմել նամակով. С. Петербургъ, Невскій, 80, Контора М. Канъ. 1—4 (և. շ.)

ՅԱՆՁՆ ԵՄ ԱՌՆՈՒՄ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԹՈՒՄ վաճառելու ՀԱՅԵՐԷՆ ամեն տեսակ ԳՐՔԵՐ։ Հասցէս՝ Новобоязетъ, Степану Батикянцу. 1—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԲԱՖՖԻԻ

ԿԱՑԾԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Գինն է 2 բուբլի 50 կօպ.

Ճանապարհի ծախսը հեղինակի վրա է։ Գիրքը բաղկացած է 722 մեծատիպ երեսներից։ Վաճառվում է „Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում“ և հեղինակի մօտ։ Բաժանորդները կանխապէս պէտք է յայտնեն իրանց հասցէն, եթէ տեղափոխվել են իրանց նախկին տեղից։ 10—10

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ,

„ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ“

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Գինն է 30 կօպէկ։

Վաճառվում է „Մշակի“ խմբագրատանը և հետևեալ տեղերում, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կենտրօնական և ուրիշ գրավաճառանոցներում, Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում (Կովկաս հիւրանոցի տակ), Միրզա Տէր-Գրիգորեանի ծխախոտի խանութում (Սիօնի փողոցի վրա), ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Կ. Դատամեանի խանութում, ԲԱԳԻՈՒՄ՝ Շիրազեանի խանութում, ԳԱՆՁԱԿՈՒՄ՝ Աղայեանի խանութում, ՇՈՒՇԻ՝ Դաշեան եղբայրների գրավաճառանոցում։ ՆՈՒԽԻ՝ ուսուցիչ Ն. Դաւթեանի մօտ, ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ՝ Վ. Հայկազեանի խանութում։ Օտարաքաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Х. Малумянцу, въ редакцію „Мшакъ„. 8—10

ՄՇԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Բարօն Ֆօն ԿՈՒՉԵՆԲԱԽԻ պատրաստում է

ԼԱՄՊԻ ՄՊԱԿԻՆԵՐ

և լամպի ուրիշ պարագաներ, չափաւոր գներով։ Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Սիմենս և Գալսկէ գործակալութեան գրասենեակում, Թիֆլիսում։ 6—10 (Հ. և.)

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ ընդունում է հիւանդներին, երեկոյեան ժամը 6—7, իր բնակարանում, Աստրօ-Արսենալնայա փողոց, № 20, տուն Բաքրաձէի։ 6—6 (և. շ.)

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՒԵԱՆՑԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի Ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բօժօժ, մետաքսի և բօժօժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց ետոյ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար դրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԱԿԻՑ ԿԱՑՔԵՐ ԱՊԱՀՈՎԱՑՆՈՂ, ԵՒ ԱՄԲՈՂՋ ԿԵԱՆՔԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

(Հիմնական դրամագլուխն է 2,400,000 բուբլի, 7000000 պահեստի դրամագլխով) յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ իր կողմից, ինչպէս կրակից ապահովելու գործերի վերաբերութեամբ, այնպէս և կեանքի, դրամագլուխների և արդիւնքների ապահովութեան վերաբերութեամբ, նշանակված է ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԼԽԱԻՈՐ ԳՈՐԾԱԿԱԼ.

ՆԻԿՈԼԱՅ ԲՕԳԴԱՆՈՎԻՉ ԽՕՍՐՕԵՎ։

Գլխաւոր գործակալութեան գրասենեակը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ, քաղաքային տան մէջ, քաղաքային վարչութեան մուտքի մօտ։ Գրասենեակը բաց է ամեն օր, բացի կիրակի և ազգային օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը, և երեկոյեան ժամը 5—7-ը։

—

Հիմնվելով վերոգրեալի վրա, խոնարհաբար խնդրում եմ, ամեն տեսակ տեղեկութիւններ և ցուցմունքների համար, այլ և ընթացիկ ապահովագրութիւնները վերանորոգելու և նոր ապահովագրութիւն կապելու համար՝ թէ կրակից ամեն տեսակ շարժական և անշարժ կայքեր ապահովելու և թէ կեանք, դրամագլուխ և արդիւնքները ապահովելու համար՝ դիմել ինձ յիշեալ հասցէով։

Գլխաւոր գործակալ՝ Ն. Բ. ԽՕՍՐՕԵՎ. 1—2

Дозволено цензурою, Тифлисъ 17 Августа 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.